5. Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս և Շատջրեք համայնքներ: Բնագավառը՝ համայնքային զարգացում
6. Օրագրի բյուջեն	Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 22,745,780 (քսաներկու միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ
7. Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս և Շատջրեք համայնքների համայնքապետարանները
8. Օրագրի իրականացման տևողությունը	15 օգոստոսի 2013թ. – 15 նոյեմբերի 2013 թ.
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,	

անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ
		Գեղարքունիքի մարզի Շատջրեք համայնքի ոռոգման ջրի և Մաքենիս համայնքի խմելու ջրի ջրատար համակարգերի վերանորոգման աշխատանքների իրականացում	15 օգոստոսի 2013թ. – 15 նոյեմբերի 2013 թ.
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեք համայնքի ոռոգման ջրի և Մաքենիս համայնքի խմելու ջրի ջրատար համակարգերի վերանորոգման աշխատանքները իրականացնելու և բաց մրցույթի արդյունքում հաղթող ձևակազմված “Բաղրամյանշին” ԲԲԸ կազմակերպության կողմից: ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեք համայնքի ոռոգման ջրի և Մաքենիս համայնքի խմելու ջրի ջրատար համակարգերի վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար նախատեսված է 22,745,780 դրամ:		
11. Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:		
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Մաքենիս և Շատջրեք համայնքների հետ համագործակցությամբ:		
13. Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Օրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:		

“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունները հիմնված
Շաղիկ Մարտիկյան



20.10.13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հոկտեմբերի 2013 թվականի N Մ- 891 - Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 4-ի նիստին)
քաղ. երևան

«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅՇԵՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայասրանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասրանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/14318-13, Հայասրանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N 02/5769-13, Հայասրանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 30-ի N 07/07.1/5373-13, Հայասրանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/11693-13 ու Հայասրանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի N 01/15/4094-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլոլ վիժն ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,779,590 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Գեղարքունիքի մարզի մի շարք համայնքներին» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլոլ վիժն ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էմիլ Դավթյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 49553183) 2013 թվականի օգոստոսի 13-ին կնքված N WVA/ VAR ADP/CM-13/LOT1&2/FY13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է


շինարարական նյութերի մատակարարում՝ 3,779,590 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլոլ վիժն ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




Շինարարական նյութերի մատակարարում Գեղարքունիքի մարզի թվով 11 համայնքներ
Օ Ր Ա Գ Ի Ը

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ Գեղարքունիքի մարզի Արեգունի, Արփունք, Ազատ, Դարանակ, Կույթ, Լճավան, Մաքենիս, Նորաբակ, Տորֆավան, Վանևան և Փոքր Մասրիկ համայնքներին՝ վերանորոգելով համայնքնային ենթակառուցվածքները:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3. Բարեգործը	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության Ֆրանսիայի աջակցող գրասենյակ, հասցե՝ Վիժն Դու Մոնդ, 7 ռուե Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա, հեռախոս՝ +01 49 49 11 12
4. Ծրագիրը կատարողը	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ հասցե՝ ք. Երևան, Բ. Մելիքյան փող. թիվ 1, ՀՎՀՀ՝ 02528755
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արեգունի, Արփունք, Ազատ, Դարանակ, Կույթ, Լճավան, Մաքենիս, Նորաբակ, Տորֆավան, Վանևան և Փոքր Մասրիկ համայնքներ: Բնագավառը՝ Համայնքային զարգացում
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,779,590 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ
7. Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Արեգունի, Արփունք, Ազատ, Դարանակ, Կույթ, Լճավան, Մաքենիս, Նորաբակ, Տորֆավան, Վանևան և Փոքր Մասրիկ համայնքների համայնքապետարանները

8. Ծրագրի իրականացման տևողությունը	13 օգոստոսի 2013թ. – 10 հոկտեմբերի 2013 թ.		
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. Միջոցներ
	Շինարարական նյութերի մատակարարում Գեղարքունիքի մարզի թվով 11 համայնքներ	15 օգոստոսի 2013թ. – 10 հոկտեմբերի 2013թ.	3,779,590 դրամ
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարարական նյութերի մատակարարումը Գեղարքունիքի մարզի թվով 11 համայնքներ իրականացնելու է բաց մրցույթի արդյունքում հաղթող ձևանշված ԱԶ Էսիլ Դավթյանը: Շինարարական նյութերի մատակարարումը Գեղարքունիքի մարզի թվով 11 համայնքներ իրականացնելու համար նախատեսված է 3,779,590 ՀՀ դրամ:		
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:		
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Արեգունի, Արփունք, Ազատ, Դարանակ, Կույթ, Լճավան, Մաքենիս, Նորաբակ, Տորֆավան, Վանևան և Փոքր Մասրիկ համայնքների հետ համագործակցությամբ:		
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:		

“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար
Շաղիկ Մարուխյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 հոկտեմբերի 2013 թվականի N Մ - 892 - Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 4-ի նիստին)
քաղ. երևան**

**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱ-
ԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆ ԶԵՌՈՒՅՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 26-ի N 3/3.8-1/14194-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N 02/5654-13, Հայաստանի Հանրապետության աշխարհիքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 26-ի N ՖԲ/ԱՄ-4/7303-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/11663-13 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի N 01/09/5922-13 եզրակացությունները, որոշում է:


1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,309,424 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սառնակունք համայնքի հանդիսությունների տան ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իմպեքս գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00847479) 2013 թվականի օգոստոսի 6-ին կնքված N WVA/SIS ADP/CW-HT-13/002/FY13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի տեղադրում՝ 2,309,424 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




Մյունիքի մարզի Սառնակունք համայնքի հանդիսությունների տան ջեռուցման համակարգի տեղադրում

Օրագիր

1	Օրագրի նպատակը	Աջակցել Սառնակունք համայնքին՝ հանդիսությունների տան կենցաղային պայմանների բարելավման նպատակով
2	Օրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա (հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000)
4	Օրագիրը կատարողը	Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ՝ միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փող. թիվ 1, ՀՎՀՀ՝ 02528755):
5	Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրն է ՀՀ Մյունիքի մարզի Սառնակունք համայնքը
6	Օրագրի բյուջեն	Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,309,424 (երկու միլիոն երեք հարյուր ինը հազար չորս հարյուր քսանչորս) դրամ

		Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա
		Օախսի ուղղությունը՝ ջափը ժամկետը Ջեռուցման համակարգի տեղադրում 2,309,424 դրամ 2013թ. երրորդ եռամսյակ
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում Սառնակունք համայնքը՝ համաձայն համայնքի կողմից ներկայացված ծրագիր առաջարկի
8	Օրագրի իրականացման տևողությունը	06 օգոստոսի 2013թ. - 10 հոկտեմբերի 2013թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մյունիքի մարզի Սառնակունք համայնքի հանդիսությունների տանը պետք է տեղադրվի ջեռուցման համակարգ (ջեռուցման կաթսա, մարտկոցներ, խողովակներ և այլ հարակից մասեր): Այդ աշխատանքները իրականացնելու համար “Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը միջոցային կարգով ընտրել է մասնագիտացված կազմակերպություն՝ “ԻՄԵՔՍ ԳՐՈՒՊ” ՍՊԸ-ն և նրա հետ կնքել է համապատասխան պայմանագիր: Աշխատանքները սկսվել են 2013թ. օգոստոսի 6-ին և ավարտվելու են 2013թ. հոկտեմբերի 10-ին: Համակարգը տեղադրելուց հետո կգործի 3-ամսյա երաշխիքային ժամկետ: Պայմանագրի արժեքն է 2,309,424 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Մյունիքի մարզի Սառնակունք համայնքի հանդիսությունների տանը պետք է տեղադրվի ջեռուցման համակարգ (ջեռուցման կաթսա, մարտկոցներ, խողովակներ և այլ հարակից մասեր): Աշխատանքները կսկսվեն 2013թ. օգոստոսի 6-ին և կավարտվեն 2013թ. հոկտեմբերի 10-ին: Համակարգը տեղադրելուց հետո կգործի 3-ամսյա երաշխիքային ժամկետ: Պայմանագրի արժեքն է 2,309,424 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում “Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Մյունիքի մարզի Սառնակունք համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի հետ:



13	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Օրագրի վերահսկողությունը իրականացվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Միսիսսիպիի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Օրագրի ընթացքի և արդյունքների աշխատություններ կներկայացվեն 22 Կառավարության հարկերի և սոցիալական օգուտների նախարարության հանձնաժողովին:
----	--	---



«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն

հայաստանյան մասնաճյուղի

Գործառնությունների դեպարտամենտի

Շաղիկ Մարտիկյան

08 հոկտեմբերի 2017





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 հոկտեմբերի 2013 թվականի N Մ - 893 - Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 4-ի նիստին)
քաղ. երևան**

**«ՎՈՐԼՂ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՏ ԻՐԱ-
ԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԶԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 26-ի N 3/3.8-1/14191-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N 02/5653-13, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 27-ի N ՖԲ/ԱՆՄ-4/7309-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/11654-13 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 15-ի N 01/5826-13 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,774,510 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի թիվ 2 մանկապարտեզի ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2013 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված N WVA/SIS ADP/HT-13/002/FY13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում՝ 2,774,510 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



“Սյունիքի մարզի Միսիան համայնքի թիվ 2 մանկապարտեզի ջեռուցման համակարգի տեղադրում”
Շրագիր

1	Շրագրի նպատակը	Աջակցել Միսիան համայնքի թիվ 2 մանկապարտեզում երեխաների խնամքի պայմանները բարելավելու նպատակով:
2	Շրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա (հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000)
4	Շրագիրը կատարողը	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փող. 1, ՀՎՀՀ՝ 02528755):
5	Շրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Միսիան համայնք բնագավառը սոցիալական
6	Շրագրի բյուջեն	Շրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,774,510 (երկու միլիոն յոթ հարյուր յոթանասուկչորս հազար հինգ հարյուր տասը) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա


		Ծախսի ուղղությունը	չավել	ժամկետը
		Ջեռուցման համակարգի տեղադրում	2774510 դրամ	2013թ. Երրորդ եռամսյակ
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում Միսիան համայնքի՝ համաձայն համայնքի կողմից ներկայացված ծրագիր առաջարկի		
8	Շրագրի իրականացման տևողությունը	05 սեպտեմբեր 2013թ. - 11 հոկտեմբերի 2013թ.		
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սյունիքի մարզի Միսիան համայնքի թիվ 2 մանկապարտեզում տեղադրվելու և ջեռուցման համակարգ (ջեռուցման կաթսա, մարտկոցներ, խողովակներ և այլ հարակից մասեր): Այդ աշխատանքները իրականացնելու համար “Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է մասնագիտացված կազմակերպություն՝ “Բարսիս” ՄՊԸ-ն, որի հետ կնքել է պայմանագիր: Աշխատանքները սկսվելու են 2013թ. սեպտեմբերի 5-ին և ավարտվելու են 2013թ. հոկտեմբերի 11-ին: Համակարգը տեղադրելուց հետո կգործի 24-ամսյա երաշխիքային ժամկետ: Պայմանագրի արժեքն է 2,774,510 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:		
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Սյունիքի մարզի Միսիան համայնքի թիվ 2 մանկապարտեզում պետք է տեղադրվի ջեռուցման համակարգ (ջեռուցման կաթսա, մարտկոցներ, խողովակներ և այլ հարակից մասեր): Աշխատանքները կսկսվեն 2013թ. սեպտեմբերի 5-ին և կավարտվեն 2013թ. հոկտեմբերի 11-ին: Համակարգը տեղադրելուց հետո կգործի 24-ամսյա երաշխիքային ժամկետ: Պայմանագրի արժեքն է 2774510 ՀՀ դրամ առանց ԱԱՀ:		
11	Շրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Շրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:		
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում “Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Միսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:		



13	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Օրագրի վերահսկողությունը իրականացվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև «Վորլդ Վիժն ինթերնեշլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: «Վորլդ Վիժն ինթերնեշլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:</p> <p>Օրագրի ընթացքի և արդյունքի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Արտակառուցվածքային բարեգործական կազմակերպության համակարգման հանձնաժողովին:</p>
----	--	---

«Վորլդ Վիժն ինթերնեշլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար Շադիկ Մարուխյան

08 հոկտեմբերի 2013





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
4 հոկտեմբերի 2013 թվականի N Մ- 894 -Ա
քաղ. երևան

**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅՇԵՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱ-
ԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱՐ ՄԵՏԱՂԱԿԱՆ
ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐՈՎ ԽԱՂԱՍԱՐՔԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ
ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/14320-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 30-ի N 02/5692-13, Հայաստանի Հանրապետության աշխարհի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 26-ի N ՖԲ/ԱՆՄ-4/7302-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/11685-13 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 25-ի N 01/5822-13 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել «Վորոլ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,094,600 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի մանկապարտեզի համար մետաղական կոնստրուկցիաներով խաղասարքերի մատակարարում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորոլ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմբիլդեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90029849) 2013 թվականի օգոստոսի 8-ին կնքված N WVA/APR, VAR, SIS ADPs/PG-13/001-01/FY13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կոնստրուկցիաներով խաղասարքերի մատակարարում և տեղադրում՝ 2,094,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորոլ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:



ՆԱԽԱԳԱՆ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ”

միջազգային բարեգործական կազմակերպության

հայաստանյան մասնաճյուղի

տնօրենի պաշտոնակատար՝

Արմեն Սաղաթեյան



**ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի մանկապարտեզի համար մետաղական կոնստրուկցիաների խաղասարքերի մատակարարում և տեղադրում
Օրագիր**

1	Օրագրի նպատակը	Աջակցել Գորայք համայնքին՝ մանկապարտեզի երեխաների ժամանցի պայմանների բարելավման նպատակով:
2	Օրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3	Բարեգործը	Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա (հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000)
4	Օրագիրը կատարողը	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):
5	Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքը Բնագավառը՝ սոցիալական

20.12/11


6	Օրագրի բյուջեն	Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,094,600 դրամ (երկու միլիոն իննսունչորս հազար) Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա: <u>Ծախսի ուղղությունը</u> <u>չափը</u> <u>ժամկետը</u> Խաղասարքերի տեղադրում 2094600 դրամ 2013թ. երրորդ եռամսյակ
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում Գորայք համայնքը համաձայն համայնքի կողմից ներկայացված ծրագիր առաջարկի:
8	Օրագրի իրականացման տևողությունը	08 օգոստոսի 2013թ. - 17 հոկտեմբերի 2013թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սյունիքի մարզի Գորայք համայնքի մանկապարտեզի բակում պետք է տեղադրվեն մետաղական կոնստրուկցիաներով խաղասարքեր (խաղային համալիր հ 4-1 հատ, կարուսել Արևիկ-1 հատ, ճոճանակ կոմբինացված հ2-1 հատ, ճոճանակ-1 հատ)։ Այդ աշխատանքները իրականացնելու համար “Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է մասնագիտացված կազմակերպություն՝ “Արմբիլդեր” ՄՊԸ-ն, որի հետ կնքել է պայմանագիր։ Աշխատանքները սկսվում են 2013թ. օգոստոսի 8-ին և ավարտվում են 2013թ. հոկտեմբերի 17-ին։ Խաղասարքերը տեղադրելուց հետո գործելու է 18-ամսյա երաշխիքային ժամկետ։ Պայմանագրի արժեքն է 2,094,600 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի։
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Սյունիքի մարզի Գորայք համայնքի մանկապարտեզի բակում պետք է տեղադրվեն մետաղական կոնստրուկցիաներով խաղասարքեր։ Աշխատանքները սկսվում են 2013թ. օգոստոսի 8-ին և ավարտվում են 2013թ. հոկտեմբերի 17-ին։ Համակարգը տեղադրելուց հետո գործելու է 18-ամսյա երաշխիքային ժամկետ։ Պայմանագրի արժեքն է 2,094,600 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի։
11	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն։

20.12/11

12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Գորայք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Միսիսի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
 հայաստանյան մասնաճյուղի
 Գործառնությունների ղեկավար և արգելափակող
 Արտակ Օրդյան

19 սեպտեմբերի 2013թ.



11/12/11



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 հոկտեմբերի 2013 թվականի N Մ- 895 - Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 4-ի նիստին)**

քաղ. երևան

**«ՎՈՐԼԳ ՎԻՃԻ ԻՆՅԵՐՆԵՅՇԵԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՑԻՆԿԱՊԱՏ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԽԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/14321-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 30-ի N 02/5693-13, Հայաստանի Հանրապետության փարաձբային կառավարման նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 30-ի N 07/07.1/5369-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/11692-13 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի N 01/14.1/2942-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 9,960,000 դրամ ընդհանուր արժեքությամբ «Օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում Արագածոտնի մարզի Թախինի տարածաշրջանի համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Դուազման» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00446864) 2013 թվականի օգոստոսի 30-ին կնքված N WVA/TAL ADP/CM-13/002/FY13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում՝ 9,960,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



08 հոկտեմբերի 2013թ.


«Օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում Արագածոտնի մարզի համայնքների համայնքների համայնքներին»
 Օ Ր Ա Գ Ի Ր

1.	Մրազրի նպատակը	Մրազրի նպատակն է վերանորոգել Թալին, Զովասար, Բրինդ համայնքների ոռոգման ենթակառուցվածքային ցանցերը
2.	Մրազրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada
4.	Մրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը Հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ +37410749146
5.	Մրազրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտնի մարզի Թալին, Զովասար, Բրինդ համայնքներ Բնագավառը՝ գյուղատնտեսություն
6.	Մրազրի բյուջեն	Մրազրի բյուջեն կազմում է՝ 9,960,000 (ինը միլիոն ինը հարյուր վաթսուհազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի
7.	Բարեգործություն ստացողը	Արագածոտնի մարզի Թալին, Զովասար, Բրինդ համայնքները
8.	Մրազրի իրականացման տևողությունը	2013թ. օգոստոսի 30-ից մինչև 2013թ-ի հոկտեմբերի 11-ը

2

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մրազրով նախատեսված է՝ 2013թ. օգոստոսի 30-ից մինչև 2013թ-ի հոկտեմբերի 11-ը ընկած ժամանակահատվածում Արագածոտնի մարզի Թալին, Զովասար, Բրինդ համայնքների ոռոգման ենթակառուցվածքային ցանցերի վերանորոգման համար գնել և համայնքներին տրամադրել d=250մմ տրամագծով նախկինում օգտագործված, ցինկապատ խողովակներ Մրազրի ընդհանուր արժեքը կազմում է 9,960,000 (ինը միլիոն ինը հարյուր վաթսուհազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Մրազրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Էռագունան» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են:
11.	Մրազրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Մրազրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Թալին, Զովասար և Բրինդ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Մրազրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Մրազրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի, Թալինի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Կանադայի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Մրազրի ընթացիկ արդյունավետության մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարությանը և Հայաստանի Հանրապետության ծրագրերի համակարգման հանձնաժողովը:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
 միջազգային բարեգործական կազմակերպության
 հայաստանյան մասնաճյուղի
 Գործառնությունները
 Շաղիկ Մարուխյան



08 հոկտեմբերի 2013թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հոկտեմբերի 2013 թվականի N Մ- 896 -Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 4-ի նիստին)
քաղ. երևան**

**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅԸՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԶՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N 3/3.8-1/14583-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 7-ի N 02/5841-13, Հայաստանի Հանրապետության փարաօրային կառավարման նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N 07/07.1/5467-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի N ՎՄ/3-4/11764-13 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N 01/14.2/3014-13 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,154,873 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Էմիլ Դավթյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 49553183) 2013 թվականի օգոստոսի 12-ին կնքված N WVA/TAL ADP/CM-13/001/Ord#1/FY13 պայմանագրում (2013 թվականի սեպտեմբերի 17-ի N WVA/TAL ADP/CM-13/001/Ord#1/FY13-01 համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 3,154,873 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



 20 սեպտեմբերի 2013թ.

Շինարարական նյութերի մատակարարում Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի համայնքներ

Ծ Ր Ա Գ Ի Ը

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կազմակերպել Արագածոտնի մարզի Դաշտաղեմ համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման և Դավթաշեն համայնքի դպրոցի նոր պատուհանների տեղադրման աշխատանքներ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	“Վորլդ Վիժն Բնթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի մասնաճյուղը Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada
4.	Ծրագրի կատարողը	“Վորլդ Վիժն Բնթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ +37410749146
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտնի մարզի Դաշտաղեմ և Դավթաշեն համայնքներ Բնագավառը՝ տեղական ինքնակառավարում, կրթություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է՝ 3,154,873 (երեք միլիոն մեկ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի
7.	Բարեգործություն ստացողը	Արագածոտնի մարզի Դաշտաղեմ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինը, Դավթաշեն համայնքի դպրոցը

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013թ. օգոստոսի 12-ից մինչև 2013թ-ի հոկտեմբերի 10-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսված է 2013թ. օգոստոսի 12-ից մինչև 2013թ-ի հոկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում Արագածոտնի մարզի մարզի Դաշտաղեմ համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման և Դավթաշեն համայնքի դպրոցի նոր պատուհանների տեղադրման աշխատանքների կազմակերպման համար համայնքապետարանին և դպրոցին տրամադրել անհրաժեշտ շինանյութեր: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,154,873 (երեք միլիոն մեկ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ շինանյութեր մատակարարելու համար պայմանագիր է կնքվել Էմիլ Դավթյան ԱՉ-ի հետ: Պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում “Վորլդ Վիժն Բնթերնեյշնլ” ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Դաշտաղեմ և Դավթաշեն համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքի վերահսկողությունն իրականացվում է “Վորլդ Վիժն Բնթերնեյշնլ” ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի, Թալինի տարածաշրջանի զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող “Վորլդ Վիժն Բնթերնեյշնլ” Կանադայի գրասենյակի կողմից: “Վորլդ Վիժն Բնթերնեյշնլ” ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային ատոլիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:

“Վորլդ Վիժն Բնթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության
 հայաստանյան մասնաճյուղի
 Գործառնությունների ղեկավար  Շադիկ Մարուխյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 հոկտեմբերի 2013 թվականի N Մ - 897 - Ա
քաղ. երևան

«ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 1-ի N 3/3.8-2/14486-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/11699-13 եզրակացությունները, **ո ր ո- 2 ու մ է.**

1. Բարեգործական որակել Դուբայից անհատ բարերարների կողմից «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված ջահերի և աթոռների (85 տեղ, 1531,1 կգ ընդհանուր քաշով, 14080 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 1100 ԱՄՆ-ի դոլար, «Սյունիքի» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն օգտագործվելու է «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության վարչական շենքի կառուցման և կահավորման համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 հոկտեմբերի 2013 թվականի N Մ- 898 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱՐԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N 3/3.8-2/14561-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի N ՎՄ/3-4/1766-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված էլեկտրատեխնիկական և տեսահսկման ապրանքները (3 տեղ, 22 կգ ընդհանուր քաշով, 11050 եվրո արժողությամբ, ներառյալ 290 եվրո բեռնափոխադրման ծախսերը, «Չվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հոկտեմբերի 2013 թվականի N Մ- 899 -Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 4-ի նիստին)
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՆԱԿԱՔԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N 3/3.8-2/14601-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հոկտեմբերի 7-ի N ՎՄ/3-4/12008-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված տեսագրող սարքավորումները (4 տեղ, 27.450 կգ ընդհանուր քաշով, 12350 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 350 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, ՄՃՓ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 հոկտեմբերի 2013 թվականի N Մ - 900 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-106-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N 3/3.8-1/14582-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի սեպտեմբերի 30-ի N ՎՄ/3-4/11755-13 եզրակացությունները, **ո Ր Ո - 2 ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Եռուստամարաթոն - 2013» ծրագրի մասին» N Մ-106-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00807821) 2013 թվականի օգոստոսի 6-ին կնքված՝ N Ծ-11/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատրաստել 10,000 հատ «հուշանվեր-այցեկարտ հավաքածու»՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հոկտեմբերի 2013 թվականի N Մ- 901 -Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 4-ի նիստին)
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱՎԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՆԱԿԱՔԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 3/3.8-1/14610-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հոկտեմբերի 7-ի N ՎՄ/3-4/12009-13 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**


1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01528652) հետ 2013 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված N 002-32 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հուշայան կոնստրուկցիաների փորձարկում՝ 357,760 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սատրոն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00068497) հետ 2013 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված N 28 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձայնային ապահովման

համակարգի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 2,726,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N Մ- 902 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՒՄԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական
կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի սեպտեմբերի 18-ի N 3/3.8-2/13696-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 16-ի N ՎՄ/3-6/9836-13 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2013 թվականի օգոստոսի 16-ի N 01/3920-13 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված բեռը՝ հավաքովի տնակի շինարարական մասեր իր բոլոր ներքին հարդարման և խոհանոցային պարագաներով (17,860 կգ ընդհանուր քաշով, 87,557.07 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ցանկը կցվում է, «Շիրակի» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

12/4.13

Ավստրիական Կարիտասի կողմից «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ին

ուղարկված բեռի ցանկ

	արժեք /եվրո
1. Էլեկտրական սարքավորումներ	24.950,93
2. Հարդարման իրեր	43.382,40
3. Խոհանոցային պարագաներ	19.223,74
Ընդամենը	87.557,07





